


3452/2

# Յ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

© National Library of Armenia OCR by Portmind

016
Հ-25
19 AUG 2008

ՀՍՍՀ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ
ՀՍՍՀ ԱԼ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ

# ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

(Օգնություն կուլտուրայի և արվեստի ժողովրդական համալսարանի ունկնդիրներին)

ԵՐԵՎԱՆ—1970

© National Library of Armenia

12 SEP 2013

345 2/2

Կազմող՝ ՄԱՅԱ ՆԵՐՍԻՍՅԱՆ
Խմբագիր՝ ՌԱՖԱՅԵԼ ԻՇԽԱՆՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм ССР
им. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Государственная республиканская библиотека Арм. ССР
им. Ал. Мясникяна
Отдел научно-библиографической и справочной работы
АРМЯНСКАЯ АРХИТЕКТУРА
Рекомендательный список литературы
(В помощь слушателям народных университетов
культуры и искусства)
(На армянском языке)
Составитель: *Майя Нерсесян*
Редактор: *Рафаэль Ишханян*
Ереван, 1970

4439-70

## ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Հայ ժողովուրդը դարեր շարունակ կառուցել է և դարերին է թողել իր կառուցողական հանճարի պտուղները։ Հայկական ճարտարապետության ու կառուցողական արվեստի ուսումնասիրությամբ զբաղվել են շատ գիտնականներ (Ի. Ստրժիգովսկի, Ն. Տոկարսկի, Ն. Մառ, Թ. Թորամանյան և այլք)։ հայտնաբերվել են վաղուց կործանված, հաճախ հողի տակ թաղված քաղաքներ և մշակույթի այլ հուշարձաններ՝ տաճարներ, պալատներ, ջրատարներ, քարավանատներ և այլն։

Հայկական ճարտարապետությունն ու կառուցողական արվեստը իր զարգացման ընթացքում միշտ փոխազդեցության մեջ է եղել հարևան ժողովուրդների մշակույթների հետ և, սակայն, միշտ պահպանել է իր յուրահատկությունը, անկրկնելի ազգային ոճն ու ինքնատիպությունը։

Այս համառոտ հանձնարարական ցանկը ընթերցողներին ներկայացնում է վերոհիշյալ հարցերին վերաբերող գրականությունը։ Ցանկում ընդգրկված են համեմատաբար նոր, վերջին երեք տասնամյակում լույս տեսած գրքերը, որոնք մատչելի են ընթերցող առավել լայն շրջաններին։ Այդ պատճառով Ն. Մառի, Թ. Թորամանյանի, Ալ. Թամանյանի որոշ աշխատություններ, չնայած նրանց գիտական խոշոր արժեքին, չեն մտցված ցուցակում։ Գրքերից բացի, տեղ են գտել նաև ամսագրային որոշ հոդվածներ, որոնք վերաբերում են առավելապես հայկական ճարտարապետության խորհրդային շրջանին և ականավոր հայ ճարտարապետների կյանքին ու գործունեությանը։

*Ցուցակում ներկայացված են նաև ռուսերեն գրքեր ու հոդվածներ, որոնց նպատակն է ՍՍՀՄ-ի ժողովուրդներին ներկայացնել հայկական ճարտարապետությունը։*

*Ցանկի նպատակն է օգնել կուլտուրայի և արվեստի համալսարանների ունկնդիրներին և բոլոր նրանց, ովքեր հետաքրքրվում են հայկական ճարտարապետության պատմության, նաև հնագիտության հարցերով, ավելի լավ ճանաչելու մեր հայրենիքը, նրա բազմադարյան մշակույթը, մեր հինավուրց ճարտարապետության հուշարձանները, սիրել ու պահպանել դրանք ժամանակի կործանարար ազդեցությունից, աջակցել այդ հուշարձանների վերականգնման և պահպանման աշխատանքներին։*

*Գրականությունը դասավորված է այբբենական կարգով, տրված է անվանացանկ և առարկայական ցանկ։*

## ОТ СОСТАВИТЕЛЯ

Веками строил армянский народ и оставил потомкам плоды своего строительного таланта. Изучением армянской архитектуры и строительной техники занимались многие ученые (И. Стржиговский, Н. Марр, Н. Токарский, Т. Тораманян и др.), открывались давно развалившиеся, часто находившиеся под землей города и другие памятники культуры: храмы, дворцы, водоводы, караван-сараи и т. д.

В своем развитии армянская архитектура и строительная культура всегда находилась во взаимовлиянии с культурами соседних народов, но всегда сохраняла своеобразие, неповторимый национальный стиль и самобытность.

Данный рекомендательный список представляет читателям литературу, относящуюся к этим вопросам. В списке подобрана литература, изданная в течение последних тридцати лет, доступная наиболее широкому кругу читателей. Поэтому некоторые труды Н. Марра, Т. Тораманяна, Ал. Таманяна не вошли в список, несмотря на их большую научную ценность. Кроме книг имеются и журнальные статьи, преимущественно о советском периоде армянской архитектуры, о жизни и деятельности армянских архитекторов.

В список включены также книги и статьи на русском языке, имея целью ознакомить русского читателя с армянской архитектурой.

Цель указателя помочь слушателям народных университетов культуры и искусства и всем читателям, интересующимся вопросами армянской архитектуры и археологии, лучше узнать нашу родину, его многовековую культуру, древние памятники архитектуры, пробудить любовь к ним, готовность всячески помочь восстановлению и сохранению этих памятников.

Литература в списке расположена в алфавитном порядке, прилагается именной и предметный указатели.



© National Library of Armenia

© National Library of Armenia

## ԳՐՔԵՐ, ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

1. ԴԱՐՅԱՆ Վ. Հնագիտական թանգարանների և պատմական հուշարձանների պահպանության խնդիրները: Եր., 1940, 38 էջ:

2. ԿՈՒՏՈՒՐԱՅԻ հուշարձանների պահպանման միջազգային կամպանիային Հայկ. ՍՍՌ-ի մասնակցության մասին: Եր., 1965, 17 էջ: (ՀՍՍՌ Կուլտ. մին-թյուն):

3. ՊԱՏՄԱԿԱՆ հուշարձանների պահպանման հայկական ընկ-թյուն: Կանոնադրություն... ընդունված է պատմական հուշարձանների հայկ. ընկ-թյան հիմնադիր հմգմ. կողմից՝ 29 փետր. 1964 թ.: Եր., 1964, 28 էջ. բնագիրը հայ և ռուս. լեզ.:

## ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ

4. ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹԱՄԱՆՅԱՆ: Հոդվածներ, փաստաթղթեր, ժամանակակիցները նրա մասին: Կազմեց և ծանոթագրեց Լևոն Զորյանը: Եր., 1960, 285 էջ: (ՀՍՍՀ ԳԱ նյութեր հայ արվեստի պատմ.):

*Գիրքն ամփոփում է Թամանյանի զեկուցումներն ու հոդվածները Երևանի վերակառուցման նոր նախագծերի և ընդհանրապես քաղաքաշինության կարևոր հարցերի մասին: Զետեղված են նաև ժամանակակիցների հուշերը Թամանյանի մասին: Ուշագրավ են Թամանյանի կնոջ՝ Կամելլա Թամանյանի, նրա քրոջ՝ Մագդալինա Թամանյան-Տասսենի, Ավ. Իսահակյանի, Մ. Սարյանի, Ե. Չարենցի, Ա. Շչուսևի, Յու. Յուրևի և շատ ուրիշների հուշերը, որտեղ բացահայտվում է խոշոր ճարտարապետի, մեծ քաղաքացու և հայրենասերի կերպարը:*

*Գիրքը հանձնարարելի է ընթերցող լայն զանգվածների համար:*

5. *ԱԿՆԱՐԿ հայ ճարտարապետության պատմության:* [Ժողովածու]: Խմբ. Բ. Ն. Առաքելյան, Մ. Դ. Մազմանյան: Եր., 1964, 326 էջ: (ՀՍՍՀ ԳԱ Արվեստի ինստ.: Ակնարկներ հայ արվեստի պատմության 2):

*Բովանդ.՝ Կ. Լ. Հովհաննիսյան:—Ա. Ա. Սահինյան:—Մ. Խ. Մնացականյան:—Լ. Ս. Բաբայան:*

*Գրքում տրված է հայ ճարտարապետության պատմությունը սկսած հնագույն շրջանից: Ցույց է տրված դարերի ընթացքում մշակված քաղաքաշինական ավանդների օգտագործումը հայ ճարտարապետության մեջ նախասովետական շրջանում: Հանգամանորեն խոսվում է նաև պատմական իրադրության, օտարերկրյա նվաճողների կործանարար ազդեցության մասին: Վերջում տրվում է սովետական շրջանում վերածնված հայ ճարտարապետության մեջ հին ձևերի և նոր շինարարական նյութերի ու մեթոդների համադրումը:*

*Գիրքը հանձնարարելի է ճարտարապետության պատմության հարցերով հետաքրքրվող ընթերցողներին:*

6. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ Ս. Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ: (ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստ.): Եր., 1963, 380 էջ:

*Աշխատության հեղինակը հուշարձանների վիմագիր արձանագրությունների ուսումնասիրությամբ վեր է հանում մինչև այժմ անհայտ 70 ճարտարապետների, 130 քանդակազարդող վարպետների և 49 վիմագիր գրիչների դերը հայ ճարտարապետության պատմության մեջ:*

*Աշխատությանը կցված են վարպետների անունները կրող բազմաթիվ արձանագրություններ ու լուսանկարներ:*

7. ԽԱԼՓԱԽՉՅԱՆ Հ. Հայաստանի արտադրական կառուցվածքները: Եր., 1961, 92 էջ:

*Աշխատության մեջ շարադրվում են ինչպես անցյալում, այնպես էլ ներկայումս լայնորեն տարածված արտադրական կառուցվածքների կառուցողական-տեխնիկական առանձնահատկությունները, ինչպես և նրանց ճարտարապետական ձևերի զարգացման պատմական ժամանակաշրջանների ընդհանրությունը։*

*Գիրքը նկատի է առնված կառուցողների, ճարտարապետների, պատմաբանների, ազգագրագետների և կուլտուրայի ու գիտության աշխատողների լայն շրջանների համար։*

8. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Հ. Ազիզբեկովի շրջանի կուլտուրայի հուշարձանները։ Եր., 1955, 111 էջ։

*Գրքում մանրամասն նկարագրված են Ազիզբեկովի շրջանում հնագույն ժամանակներից կառուցված ամրոցները, եկեղեցիները, վանքերը, քարավանատները, խաչքարերը, կամուրջները և այլն։*

*Տրված է համառոտ պատմական ակնարկ Սյունիքի մասին։ Գրքում զետեղված են բազմաթիվ լուսանկարներ, որոնք օգնում են մատուցվող նյութի ընկալմանը։*

*Գիրքը նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար։*

9. ԷԼԼԱՐՅԱՆ Ի. Աղստևի հովտի բնության և պատմական հուշարձանները։ Եր., 1968, 96 էջ, 28 թ. նկ. և քարտեզ։ (Պատմ. հուշարձ. պահպ. հայկ. ընկ-թյուն)։

*Գիրքը ծանոթացնում է Հայաստանի տեսարժան վայրերից մեկին՝ Աղստևի հովտին [Դիլիջան, Իջևան] և պատմում է նրա պատմական անցյալի, բնության գողտրիկ անկյունների և հատկապես միջնադարյան ճարտարապետական հուշարձանների՝ վանքերի ու եկեղեցիների, ամրոցների ու բերդերի, քարավանատների ու կամուրջների, մահարձանների և այլ շինությունների մասին։ Գրքում զետեղված են բազմաթիվ գունավոր լուսանկարներ և քարտեզ, որտեղ նշված են դեպի հուշարձանները տանող երթուղիները։*

*Գիրքը գրված է կենդանի, աշխույժ լեզվով և մատչելի է բոլոր ընթերցողների համար։*






10. ԼԵՈ։ Անի։ Տպավորություններ, հիշատակներ. անցածն ու մնացածը։ Եր., 1963, 384 էջ։

*Այս գրքում զետեղված են հայ մեծանուն պատմաբան Լեոյի տպավորությունները դեպի Անի կատարած ճանապարհորդություններից։ Տրվում են նաև Անիի թագավորության, իշխանական տների ու նշանավոր այլ անձանց և պատմական դեպքերի նկարագրությունները։ Մանրամասն նկարագրված են ճարտարապետական կառուցվածքները, եկեղեցիները, տաճարները, պալատները և այլ շինություններ։ Այս*



© National Library of Armenia

բոլորը գրված է պատկերավոր, հյութեղ, համարյա գեղար-
վեստական երկին հատուկ լեզվով ու աշխույժ ոճով։
Գիրքը կարդացվում է մեծ հետաքրքրությամբ, այն հանձ-
նարարելի է պատմությամբ և հնագիտությամբ հետաքրքր-
վող ընթերցող լայն շրջաններին։
11. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ Հայաստանի պատմական հուշարձան-
ները։ 1—5. Եր., 1937—1955։ (ՀՍԽՀ Պատմ. գրակ. ինստ.
հուշարձանների պահպանութ. կոմիտեի հրատ., սերիա 1)։
11ա. ԴԻԼԻՋԱՆԻ ՇՐՋԱՆ։ (Ուղեցույց-ալբոմ)։ Շրջանի
հնագիտական քարտեզով և ռուս, ադրբեջ. ու ֆրանս. ամ-
փոփումներով։ Կազմ.՝ Հ. ԹԱՄՅԱՆ։ Եր., 1937, 39 էջ,
16 թ. նկ.։
Գրքում խոսվում է Դիլիջանի շրջանի պատմական հուշար-
ձանների մասին։ Ուշագրավ են երկու մոնումենտալ հուշար-
ձաններ՝ Գոշավանքը և Հաղարծինը, որոնք իրենց ճարտա-
րապետական կառուցվածքով, որմնանկարներով, բարձրա-
քանդակներով և վիմական բազմաթիվ արձանագրություննե-
րով ուրույն տեղ են գրավում հայկական ճարտարապետու-
թյան մեջ։ Նկարագրվում են նաև ավելի վաղ շրջանի՝
բրոնզե և երկաթե դարերին վերաբերող դամբարաններ և
«վիշապ»-ներ։ Նշված են նաև ուսումնասիրության կարոտ
հուշարձանները, որոնք սպասում են իրենց հետազոտող-
ներին։
Գրքում զետեղված են ռուսերեն, ադրբեջաներեն և ֆրան-
սերեն ամփոփումներ, լուսանկարներ, որոնք կարող են հե-
տաքրքրել ավելի լայն ընթերցող շրջաններին։
11բ. ԳԱՌՆԻ, ԳԵՂԱՐԴ։ (Ուղեցույց-ալբոմ)։ Գեղարդա-
ձորի հնագիտ. քարտեզով և ռուս. ադրբեջ. ու ֆրանս. ամ-
փոփումներով։ Կազմ.՝ Ս. Բարխուդարյան։ Եր., 1938, 46 էջ,
22 թ. նկ.։
Գրքում խոսվում է Գեղարդաձորի հուշարձանների 4 նշա-
նավոր խմբերի՝ Գառնի գյուղի, Գեղարդավանքի, Հավուց
Թառի կամ Ամենափրկիչ վանքի և վիշապների մասին։ Նկա-
րագրված են դեպի այդ հուշարձանները տանող ճանապարհ-



ները, բնությունը։ Այս հուշարձանախմբերի մեջ ուշագրավ են Գառնիի հեթանոսական տաճարը և Գեղարդի ժայռափոր եկեղեցին՝ Այրիվանքը, որոնք եզակի են շինարարական ու ճարտարապետական տեսակետից, կատարյալ և անկրկնելի կառուցումներ են։ Այստեղ նկարագրվում են նաև 23 «վիշապներ», բազալտի քարից տաշված հսկա կոթողներ, որոնք ունեն 3000 տարվա պատմություն և մարմնավորում են նախաքրիստոնեական Հայաստանի ջրի աստվածներին։ Գրքում տրված են շարադրանքի ռուսերեն, ադրբեջաներեն և ֆրանսերեն ամփոփումներ և լուսանկարների ալբոմ։

Գիրքը հանձնարարելի է բոլոր կարգի ընթերցողների և գրոսաշրջիկների համար։

11գ. ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՇՐՋԱՆ։ (Ուղեցույց-ալբոմ) Վաղպատի հնագիտ. քարտեզով և ռուս. ադրբեջ. ու ֆրանս. ամփոփումներով։ Կազմ.՝ Կ. Ղաֆադարյան։ Եր., 1938, 29 էջ, 18 թ. նկ.։

Գիրքը ուղեցույց-ալբոմ է, որտեղ ներկայացված են Վաղարշապատի շրջանի պատմական հուշարձանները՝ էջմիածնի մայր տաճարն ու հարակից շենքերը, Գայանեի, Շողակաթի վանքերը, Զվարթնոցը և հայկական ճարտարապետության պսակը՝ Հռիփսիմեի տաճարը, ինչպես նաև շրջանի գյուղերում պահպանված ամրոցներ, քարայրներ, մեգալիթյան հուշարձաններ, դամբարաններ և այլն։

Գիրքն ունի ռուսերեն, ադրբեջաներեն և ֆրանսերեն ամփոփումներ և շրջանի հնագիտական քարտեզ։ Մատչելի է ընթերցողների լայն շրջանների և զբոսաշրջիկների համար։

11դ. ԱՇՏԱՐԱԿԻ ՇՐՋԱՆ։ (Ուղեցույց-ալբոմ) Հնագիտական քարտեզով։ Կազմ.՝ Վ. Աբրահամյան։ Եր., 1940, 46 էջ, 21 թ. նկ. հայ. ռուս. լեզ.։ (4-րդ մասի ընդհ. խորագիրն է «Հայկական ՀՍՍՀ պատմական հուշարձաններ»)։

Գրքում նկարագրված են Աշտարակի շրջանի պատմական հուշարձանները, որոնք ոչ միայն հայկական ճարտարապետության և արվեստի կոթողներ են, այլև իրենց բազմաթիվ արձանագրություններով կարևոր աղբյուր են Հայաս-



© National Library of Armenia

*տանի պատմության ուսումնասիրության համար։ Գրքույկում*
*մանրամասն նկարագրվում է հուշարձանների աշխարհագրա-*
*կան դիրքը, նրանց կառուցման պատմությունը և այժմյան*
*վիճակը։ Ներկայացված են եկեղեցիները, բերդերը, կամուրջ-*
*ները, խաչքարերը, ջրանցքներն ու աղբյուրները և նրանց*
*կատարած դերը ժամանակի հասարակական և տնտեսական*
*կյանքում։*

*Գրքույկը գրված է հայերեն և ռուսերեն լեզուներով և ունի լուսանկարների ալբոմ։ Այն մատչելի է ընթերցողների լայն շրջաններին։*

11ե. ԻՋԵՎԱՆԻ ՇՐՋԱՆ։ (Ուղեցույց)։ Կազմ.՝ Հ. Եղիազարյան։ Եր., 1947, 78 էջ, (ՀՍՍՌ Մինիստր. սով. կից ճար-
տարապ. գործ. վարչ., պատմ. հուշարձ. պահպ. կոմիտե).—
հայ. ռուս. լեզվ. (5-րդ մասի խորագիրն է «Սովետական Հայաստանի պատմ. հուշարձանները»)։

*Գրքում տրված է Իջևանի շրջանի պատմության համառոտ*
*ակնարկ, նկարագրված են գլխավոր հուշարձանները, որոնք*
*երբեմն վերաբերում են նախաքրիստոնեական շրջանին։ Հիշ-*
*արժան են Մակարավանքը, Առաքելոց վանքը և Կիրանց վան-*
*քը. վերջինս Հայաստանում եզակի աղյուսաշեն կառույց է։*
*Ուշագրավ է նաև Ուզունթալայի դիտակայանը, ինչպես նաև*
*քարավանատները, կամուրջները և այլ հուշարձաններ։*

*Բնագիրը տրված է հայերեն և ռուսերեն լեզուներով և նախատեսված է զբոսաշրջիկների և ամեն կարգի ընթերցողների համար, որոնք հետաքրքրվում են Հայաստանի հնագիտության և ճարտարապետության հարցերով։*

12. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Է. Ալավերդու շրջանի կուլտուրայի հուշարձանները։ (Ուղեցույց)։ Եր., 1952, 111 էջ, 50 թ. նկ.։ ՀՍՍՌ Մինիստր. սովետին կից ճարտարապետ. գործ. վարչ., ճարտարապ. հուշարձան. պահպանության կոմիտե։ Տեքստը հայ և ռուս. լեզ.։ Մատենագիտ.՝ էջ 52—53։

*Գիրքը յուրատեսակ ուղեցույց է նվիրված Ալավերդու շրջանի պատմական հուշարձաններին։ Ներկայացված են Հաղբատի, Օձունի, Սանահնի, Ախթալայի և մյուս հռչակավոր*



*վանքերը, նշանավոր կամուրջները, մահարձաններն ու կոթողները, որոնք մեծ արժեք են ներկայացնում Հայաստանի նյութական մշակույթի պատմության ուսումնասիրության տեսակետից։ Ներկայացված են նաև բերդերն ու ամրոցները, որոնք ուշագրավ են որպես պաշտպանական կառուցվածքներ։*

*Գիրքը գրված է հայերեն և ռուսերեն, հագեցված է բազմաթիվ լուսանկարներով, մատչելի է ընթերցողների լայն շրջանների համար։*

13. ՀԱՅԿԱԿԱՆ ճարտարապետության հուշարձաններ։ Նկ. Գ. Ավագյան։ Եր., 1968, 40 էջ։ (ՀՍՍՌ Մինիստր. սովետին առընթեր արտասահմանյան տուրիզմի վարչութ.)։ Մատենագիտ.՝ էջ 41—42, հայ., ռուս., անգլ. լեզ.։

*Ալբոմում ամփոփված են Հայաստանի գրեթե բոլոր հուշարձանների նկարները և համառոտ տեղեկություններ նրանց շինարարների, պատմության և այժմյան վիճակի մասին։*

*Գրքույկը նախատեսված է զբոսաշրջիկների և ընթերցող լայն շրջանների համար։*

14. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վ. Ալեքսանդր Թամանյան։ [Համառոտ ակնարկ կյանքի և ճարտարապ. գործունեության մասին]։ ՀՍՍՌ Քաղ. և գիտ. գիտելիք. տարածման ընկ., Եր., 1958, 31 էջ։

*Գրքում պատմվում է հայ մեծ ճարտարապետ Ալ. Թամանյանի կենսագրությունը և աշխատանքային գործունեությունը։ Համառոտակի վերլուծված են նրա նախագծերը և դրանց նշանակությունը հայ ճարտարապետության առաջընթացի և զարգացման համար։ Գիրքը նախատեսված է ընթերցող լայն զանգվածների համար։*

15. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վ. Անի քաղաքը։ Միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության պատմությունից։ Եր., 1964, 93 էջ, 32 թ. նկ.։

*Անիին նվիրված այս ուսումնասիրությունը կազմված է հնագիտական պեղումների, պատմական և այլ աղբյուրների*



© National Library of Armenia

© National Library of Armenia

հիման վրա, լուսաբանում է հայ ժողովրդի պատմական անցյալում այնքան կարևոր նշանակություն ունեցած այդ կենտրոնի քաղաքաշինական պատկերը։

Գրքում կան գունավոր նկարներ, որոնք ավելի ցայտուն և պատկերավոր են դարձնում շարադրանքը։ Այն նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար։

16. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վ. Դվին. 5—7-րդ դդ. ճարտարապետական հուշարձանները: (Ըստ 1937—1939 թթ. պեղումների նյութերի): Եր., 1950, 115 էջ:

Գրքում հետազոտվում են Հայաստանի հին մայրաքաղաք Դվինում 1937—1939 թթ. պեղումների հետևանքով հայտնաբերված 5—7-րդ դարերին վերաբերող ճարտարապետական մոնումենտալ հուշարձանները ու առանձին բեկորները։ Համառոտակի ակնարկի ձևով ներկայացված են Դվինի մասին եղած գրական նյութերը, ինչպես և պատմական այն պայմանները, որոնց ֆոնի վրա զարգացել է Դվինի ճարտարապետությունը։

Գիրքը մատչելի է ընթերցող լայն շրջաններին։

17. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վ. Զվարթնոց: Եր., 1954, 27 էջ:

Գրքույկը ուղեցույց է, որտեղ նկարագրվում է դեպի Զվարթնոց տանող ուղիները։ Խոսվում է Զվարթնոցի կառուցման, ճարտարապետության, նրա նշանակության մասին հայ ճարտարապետության մեջ։ Նախատեսված է ընթերցող լայն զանգվածների համար։

18. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վ. Էջմիածնի ճարտարապետական հուշարձանները: Եր., 1969, 31 էջ, 41 էջ լուսանկ.: (Պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկ-յուն):

Ալբոմում զետեղված են Էջմիածնի մայր տաճարի, նրա առանձին մասերի, հարակից շինությունների և օժանդակ շենքերի գունավոր լուսանկարները։ Տեքստը պատմական համառոտ ակնարկ է հայ եկեղեցու և ճարտարապետության մասին։

Գիրքը նախատեսված է ամեն կարգի ընթերցողների համար։






19. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վ. Միջնադարյան Հայաստանի քարավանատները և կամուրջները: Եր., 1960, 146 էջ:

Ամփոփում ռուս. լեզ.: Մատենագիտ.՝ էջ 134—137:

Աշխատության մեջ պատմահնագիտական և ճարտարապետական ուսումնասիրության է ենթարկված միջնադարյան Հայաստանի աշխարհիկ կառուցվածքների մի առանձին խումբ՝ առևտրական հին ճանապարհները, որոնց շինարարությունը ծավալվեց ավատական Հայաստանում քաղաքնե-

րի և առևտրի զարգացման հետևանքով։ Գրքում զետեղված են ՀՍՍՀ-ի տարածության վրա միջնադարյան քարավանատների և կամուրջների տեղադրման քարտեզ, բազմաթիվ լուսանկարներ և չափագրություններ, որոնք ավելի ցայտուն և դյուրըմբռնելի են դարձնում շարադրանքը։

Գիրքը մատչելի է ընթերցողների լայն շրջանների համար։

20. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Կ. Էրեբունի։ Երևանի հիմնադրման 2750-ամյակը։ ՀՍՍՀ ԳԱ ակադ. Բ. Բ. Պիոտրովսկու խմբ.։ Եր., 1968, 76 էջ։ 20 թ. նկ. հատակագիծ։ (ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինս-տ)։

Երևանի հարավ-արևելյան ծայրամասում բարձրացող, մինչ այդ անխոս և համարյա անհայտ Արին-բերդ բլուրը տարի առ տարի, անընդմեջ պատմում է աշխարհի հնագույն քաղաքներից մեկի՝ Երևանի կյանքի դրվագները։ Արին-բերդի ընդերքում հայտնաբերված հնագիտական բազմաթիվ նյութերը տարբեր մշակույթների՝ ուրարտականի, աքեմենյան Իրանի և հայկականի հաջորդական զուգադրման մասին են վկայում։ Այդ նյութերը պարզաբանում են, թե ինչպես «Էրեբունի» անվանումը փոխակերպվեց «Երևանի»-ի, որին դարերը չեն ծերացրել։ Գրքում ներկայացված են լուսանկարներ, վերակազմություններ, որոնք որոշակի պատկերացում են տալիս մեր նախնիների նաև շինարարական արվեստի և ճարտարապետության մասին։

Գիրքը մատչելի է ընթերցող լայն շրջանների համար։

21. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՍՏ. Հայաստանի գյուղական բնակավայրերի ճարտարապետությունը։ (Ակնարկ)։ Եր., 1956, 224 էջ։

Գրքում խոսվում է այն մասին, որ կոլեկտիվացման հետագա զարգացումը առաջ է բերել գյուղի վերահատակագծման անհրաժեշտություն։ Գրքում մանրամասն վերլուծության են ենթարկվում գյուղական բնակավայրերի հատակագծման և կառուցապատման, կոլտնտեսային արտադրական կառուցվածքների, գյուղական բնակելի տների և հասարակական



4439-20

կառուցվածքների շինարարության և ճարտարապետական լուծումների հարցերը։

Գիրքը հանձնարարելի է ընթերցող լայն շրջաններին։

22. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՍՏ. Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը։ Եր., 1960, 267 էջ։ (ՀՍՍՌ ԳԱ արվեստի ինս-տ, ՀՍՍՌ Մինիստր. սով. շինարար. ճարտարապ. գործ. պետ. կոմիտե)։

Աշխատության մեջ շարադրվում է պատմական Սյունիքի ճարտարապետական ինքնատիպ դպրոցի պատմությունը։ Հեղինակը Սյունիքի դպրոցի լավագույն կոթողները համեմատում է պատմական Հայաստանի մյուս շրջանների հանրահայտ կառուցումների հետ, հիմնավորապես ցույց է տալիս ինչպես նրանց տարբերությունները, այնպես էլ ընդհանրությունները։ Ապացուցում է, որ Սյունիքի դպրոցը խոշոր ավանդ ունի հայկական ճարտարապետության զարգացման գործում։

Գիրքը հանձնարարելի է ճարտարապետության հարցերով հետաքրքրվող ընթերցողների լայն շրջաններին։

23. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՍՏ. Նիկողայոս Մառը և հայկական ճարտարապետությունը։ Եր., 1969, 180 էջ։

Նիկողայոս Մառի անունն անխզելիորեն կապված է հայ ժողովրդի դարավոր մշակույթի ուսումնասիրության հետ։ Մառը առաջինն էր, որ լույս աշխարհ հանեց միջնադարյան Հայաստանի կենտրոն Անիի կործանված պալատներն ու տաճարները, բնակելի տները, փողոցներն ու ջրմուղը։ Նրա աշխատությունները, հայկական ճարտարապետության մասին, մինչև այսօր էլ չեն կորցրել իրենց նշանակությունն ու հետաքրքրությունը։

Այդ մասին է պատմում այս գիրքը, որը գրված է հանրամատչելի լեզվով և բազմաթիվ լուսանկարներով հարստացնում է շարադրանքն ու հետաքրքիր դարձնում ընթերցող լայն շրջանների համար։

24. ՋՈՒՀԱՐՅԱՆ Թ. Սովետական Հայաստանի պատմական հուշարձանները։ Եր., 1961, 184 էջ, նկ.։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Мясникяна

© National Library of Armenia

*Գրքում բացահայտվում է պատմական հուշարձանների նշանակությունը երկրի պատմության ուսումնասիրության համար։ Հանգամանորեն բնութագրվում է Հայաստանի և հայ ժողովրդի պատմությունն ըստ ժամանակաշրջանների, դրա հետ միասին տրվում է նաև հայ ճարտարապետության և շինարարական արվեստի աստիճանական զարգացումն ու ելևէջները։ Սկսած նախնադարի պատմական հուշարձանների նկարագրությունից մինչև զարգացած միջնադարի կառուցումները՝ առանձին-առանձին նկարագրվում և վերլուծվում են շինությունները ըստ տեսակների. դամբարաններ, ամրոցներ և բերդաքաղաքներ, մատուռներ, քարակոթողներ, խաչքարեր, մահարձաններ, քարավանատներ, կամուրջներ և այլն։ Մանրամասն տեղեկություններ են տրվում կառուցող վարպետների, կառուցման թվականների, հուշարձանների վայրի և այժմյան վիճակի մասին։*

*Գիրքը գրված է մատչելի լեզվով և հանձնարարելի է ընթերցողների լայն շրջաններին։*

25. ՎԱՐԴԱՆՅԱՆ Ս. Հայկական ժողովրդական բնակելի տների ճարտարապետություն: Պատմական ակնարկ: Եր., 1959, 131 էջ:

*Գրքում շարադրված է ժողովրդական բնակելի տների շինարարության աստիճանական զարգացման պատմությունը՝ սկսած պարզագույն օթևանից մինչև բարդ հատակագծային բնակելի տները։ Տրված է բնակելի տների ձևերի զարգացումը, կապված հայ ժողովրդի նյութական և մշակութային կյանքի զարգացման, երկրի աշխարհագրական առանձնահատուկ պայմանների և տեղական շինանյութերի հետ։*

*Գրքում զետեղված են բազմաթիվ լուսանկարներ, որոնք մեծապես նպաստում են նյութի ընկալմանը։*

*Գիրքը հանձնարարելի է ճարտարապետության պատմությունը ուսումնասիրողների, ինչպես և ընթերցող լայն շրջաններին։*

26. ՎՐՈՒՅՐ ԱՐՏԱՇԵՍ: Անիում: [Հիշողություններ Անիում կատարած պեղումների մասին]: Եր., 1964, 113 էջ, 20 թ. նկ.:



*Գրքում վառ, պատկերավոր ձևով պատմվում է հնադարյան քաղաքի կիսակործան շենքերի, բերդերի, պարիսպների, ընդհատակյա ուղիների և լաբիրինթոսների, շրջակա բլուրների և Անիի ընդհանուր համայնապատկերի մասին։ Հեղինակը մասնակցել է քաղաքի պեղումներին և ականատեսի իրազեկությամբ պատմում է նաև Մառի և նրա արշավախմբի անդամների՝ Աշխարհբեկ Քալանթարի, Հովսեփ Օրբելու, Թորոս Թորամանյանի, Տարագրոսի, Ն. Բունիաթյանի, Նիկոլայ Տոկարսկու և այլոց մասին։ Գիրքը համարյա գեղարվեստական շարադրանք է, և նրանում զետեղված լուսանկարները ավելի են խորացնում տպավորությունը։*

*Գիրքը հանրամատչելի է և կհետաքրքրի ընթերցողներին՝ սկսած դպրոցականից մինչև գիտնականը։*

## ԱԼԲՈՄՆԵՐ

27. ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ: Հայաստան: Դառնի. ալբոմ: [Բեյրութ. 1959]. 10 էջ, տեքստ. 61 թ. նկ.:

28. ԵՍԱՅԱՆ Խ. Հայաստանի հուշարձանները: (Գունավ. վերատպ. ալբոմ): ՀՍՍՀ Մինիստր. սով. առընթեր արտասահ. տուրիզմի վարչություն): 1968, 10 թ. գունավ. նկ.:

29. ԷՋՄԻԱԾԻՆ: Ալբոմ: Խմբ. Ա. Հատիտյան: Եր., 1962, 32 էջ: Բնագիրը հայ և անգլ. լեզ.:

30. ՀԱՅԱՍՏԱՆԻ պատմական հուշարձանները: [12 լուսանկ. բնագիր] Ալբոմ: Եր., 1968, 12 էջ, նկ. տեքստով:

31. ԶՎԱՐԹՆՈՑ: [Լուսանկարչական ակնարկ]: Բնագիրը՝ Կ. Լ. Հովհաննիսյանի: Եր., 1964, 20 էջ:

31ա. ՍՈՎԵՏԱԿԱՆ Հայաստանի պատմա-ճարտարապետական հուշարձանների պատկերազարդ քարտեզ-ուղեցույց: Կազմեց և նկարազարդեց Գ. Ավագյանը: Տեքստը՝ Ս. Քալանթարյան: Երևան, 1968:

32. Վ. Ի. ԼԵՆԻՆԻ արձանը Երևանում: (Ալբոմ): Գլխ. խմբ. Գ. Աղաբաբյան: Եր., 1964, 12 էջ, 23 նկ.:

33. АРХИТЕКТУРА и строительство Армении. [Альбом]. Ереван, 1967, 16 стр. с илл.

34. АРХИТЕКТУРА Советской Армении. [Альбом. К 30-летию Сов. Армении 1920—1950]. Ред. колл. Р. Б. Азизбекян. Текст З. Т. Бахчинян. М., 1951. 180 стр.

35. АРХИТЕКТУРА древней Армении. Семьдесят пять фотографий. К празднованию 1000-летия арм. нар. героичес. эпоса «Давид Сасунский». [Л.] Арм. филиал АН СССР. 1939, 75 стр. илл.

36. ТЕР-НЕРСЕСЯН С. Ахтамар. Церковь Святого Креста. Альбом с фотогр. Дж. Доната и Дж. Ровеля. Кембридж. Типогр. Гарвардского ун-та. 1965, 60 стр. На англ. языке.

37. ВЫСТАВКА АРМЯНСКОГО ИСКУССТВА. Архитектура, миниатюра и живопись. Каир. 1943, 21 [10] стр. На франц. языке.

38. УТУДЖЯН Эд. Памятники армянской архитектуры IV—XVII в.в. [Альбом]. Париж. 1967. 179 [8] стр. текста и илл., библ. стр. 169—179. На франц. языке.

39. АХПАТ. Монастырский комплекс. [X—XII в.в.] Альбом. Милан. 1968, 47 стр. с илл., библ. с. 9. На итал. языке.

40. ХАЧКАРЫ. [Крестные камни]. Альбом. Милан, 1969. 63 стр. с илл., библ. стр. 14. На итал. языке.

## КНИГИ И ИССЛЕДОВАНИЯ НА РУССКОМ ЯЗЫКЕ

41. АРАКЕЛЯН Б. Н., АРУТЮНЯН В. М. и МНАЦАКАНЯН С. Х. О некоторых вопросах истории армянской архитектуры. (По поводу книги Г. Н. Чубинашвили «Разыскания по армянской архитектуре». Тбилиси, 1967, 212 стр.). Ереван, 1969. 135 стр. (АН Арм. ССР, Институт искусств).





42. АРУТЮНЯН В. М. и ОГАНЯН К. Л. Архитектура Советской Армении. Краткий очерк. Ереван, 1955, 296 стр. (АН Арм. ССР. Сектор истории и теории искусств).

В книге описана архитектура Советской Армении, начиная с восстановительного периода. Дан неуклонный рост, которого достигли архитекторы Советской Армении, показано мастерски использованное архитектурное наследие и современные методы строительства.



© National Library of Armenia

Книга доступна широким массам читателей.

**43. АРУТЮНЯН В. М. Город Ани. Из истории градостроительства средневековой Армении. Ереван, 1964, 89 стр.**

О цветущей столице, выдающемся административно-политическом, торгово-ремесленном и культурном центре феодальной Армении—Ани рассказывается в этой книге. Ани имеет неоценимое значение и как своеобразный эталон градостроительной культуры средневековья. Настоящее исследование выполнено по материалам археологических раскопок и других источников. Книга оснащена фотографиями и наглядно показывает руины, находящиеся за пределами территории Советской Армении, недоступные для ознакомления.

Книга доступна всем интересующимся историей архитектуры.

**44. АРУТЮНЯН В. М., АСРАТЯН М. М. и МЕЛИКЯН А. А. Ереван. М., 1968, 302 стр. с библиогр.**

Книга издана к 2750-летию Еревана и является историей его архитектуры и строительства с древних времен до наших дней. Труд снабжен историческими документами, фотографиями, наглядно показывающими рост и развитие города, его строительной культуры и техники.

Книга популярна и доступна широкому кругу читателей.

**45. АРУТЮНЯН В. М. Звартноц. (Храм 7-ого в. Путеводитель. 2-ое изд.) Ереван, 1954. 27 стр. (Управление по делам архит. при Сов. Мин. Арм. ССР).**

Книга имеет целью ознакомить читателей и посетителей Звартноца с историей строительства и архитектурой храма и дворца. В книге много иллюстраций, помогающих читателю лучше воспринять текст.

**46. АРУТЮНЯН В. М. и САФАРЯН С. А. Памятники армянского зодчества. М., 1951. 243 стр.**



В книге описаны памятники архитектуры Армении с древних времён до 19-го века. Начинается рассказ с описания памятников мегалитической культуры, сохранившихся в горных районах Зангезура и Арагаца. Исследованы также материалы Кармир-блура и др. В книге даны аннотации описанных памятников.

Книга рассчитана для читателей, интересующихся историей архитектуры.

**47. АРУТЮНЯН В. М. Эчмиадзин. Москва, 1958. 22 стр.**

В книге повествуется об истории города Вагаршапата—древней столицы Армении, о строительстве Эчмиадзинского собора, о его переделках, о легенде, объясняющей происхождение названия собора.

В книге имеются иллюстрации. Она доступна большому кругу читателей.

**48. БУНАТЯН Н. Г. и ЯРАЛОВ Ю. С. Архитектура Армении. (1—19 в.в.). Москва, 1950. 144 стр.**

В книге изложена история армянской архитектуры с древних времён до 19-го века. Дан краткий исторический очерк и исторические этапы развития армянской архитектуры. Описаны архитектурные памятники и дана оценка их роли в развитии архитектуры и строительной техники Армении. Книга общедоступна и представляет интерес для читателей большого круга.

**49. ЕРЕМЯН А. Б. Храм Рипсимэ. Ереван, 1955. 179 стр. с иллюстр. и карт.**

Работа посвящена исследованию одного из выдающихся памятников древней Армении—храму Рипсимэ, который занимает особое место в истории армянской архитектуры как по своеобразию композиции, так и по своим художественным достоинствам, воплощающим в себе традиции национального искусства, его самобытность. Дана также история исследования храма различ-



© National Library of Armenia

ными учеными, ошибочные трактовки некоторых из них (Шнаазе, Кондаков, Чубинашвили и др.) подвергнуты критике. В книге имеется множество иллюстраций и чертежей, подтверждающих и обогащающих текст.

Книга предназначена для читателей, интересующихся архитектурой.

**50. КАРЛИК Л. В. Каро Алабян. (1897—1959). Ереван, 1966. 108 ст. 29 л. илл.**

Книга об архитекторе Каро Алабяне отражает не только его творческий путь, но и сложный путь становления советской архитектуры. Текст хорошо иллюстрирован и снабжен перечнем проектов, статей, докладов и выступлений К. Алабяна и публикаций о нем самом.

Книга представляет интерес для широкого круга читателей, интересующихся советской архитектурой, а также для учащейся молодежи.

**51. КИРИЛЛОВА Ю. Армения — открытый музей. Москва, 1969. 175 стр.**

«Для любителей старины и искусства трудно найти лучшую сокровищницу редкостей, чем Армения». Так начинается книга московской журналистки, влюбленно рассказывающая об Армении, о ее истории, о ее природе, о памятниках архитектуры известных и малоизвестных. Предисловие Мартироса Сарьяна делает книгу привлекательной. Она рассчитана для широкого круга читателей и туристов.

**52. ОГАНЕСЯН К. Л. Зодчий Трдат. (10—11 в.в.). Ереван, 1951. 110 стр. (Упр. по делам архит. при Сов. Мин. Арм. ССР).**

В книге рассказывается о жизни и деятельности великого армянского зодчего и строителя Трдата, строившего замечательные дворцы, соборы Ани и других городов. В книге помещены многочисленные иллюстрации творений Трдата, дан подробный анализ стиля и строи-






тельной техники. В историческом очерке пересказаны судьбы описанных строений и городов, в основном погибших от неприятельских нашествий и землетрясений.

Книга доступна широкому кругу читателей.

**53. САИНЯН Ал. Гарни и Гегард. Москва, 1958. 19 стр. текста, 22 стр. илл.**



© National Library of Armenia

Книга рассказывает о редких памятниках армянской архитектуры — единственном на территории СССР языческом храме Гарни и высеченном в скале храме в Гегарде-Айриванке. В книге имеются цветные фотографии памятников. Она предназначена широкому кругу читателей.

**54. ТОКАРСКИЙ Н. М. Архитектура Армении. 4—14 в.в. Ереван, 1961. 388 стр.**

В книге показано развитие архитектурной и инженерной мысли в средневековой Армении. Автор дает обзор и анализ гражданских и церковных сооружений, а также знакомит с превосходными образцами художественной резьбы по камню, украшавшей монументальные здания. Книга написана ясным языком, без перегрузки специальными терминами и может представить интерес для широкого круга читателей, желающих ознакомиться с культурным наследием армянского народа. Текст иллюстрирован многочисленными чертежами и фотографиями.

**55. ТОКАРСКИЙ Н. М. Архитектура древней Армении. Ереван, 1946. 381 стр., 96 стр. илл. (АН Арм. ССР. Институт истории).**

Книга позволяет не только ознакомиться с отдельными сооружениями, но и сделать общий обзор древнеармянского зодчества, проследить, как на протяжении веков работали армянские зодчие и чем они обменивались со своими зарубежными собратьями в процессе создания многообразных архитектурных форм. Также подвергаются критике ненаучные и ошибочные взгляды и высказывания некоторых ученых об армянской архитектуре. Подробно исследованы особенности строительства и архитектуры городов Ани и Двина, храмов Ахтамар и Рипсимэ, строительные приемы древних мастеров и т. д.



Книга доступна широкому кругу читателей, интересующихся вопросами архитектуры и археологии.

**56. ТОКАРСКИЙ Н. М. Гегард. (Армения). Москва, 1948. 37 стр., 13 л. илл. (Институт истории и теории архитектуры. Сокровища зодчества народов СССР. Под общ. ред. акад. В. Веснина и проф. Д. Аркина).**

Книга дает ясное и полное представление о том, как создавался древнеармянский храм — Гегард, что являлось движущей силой этого создания, какое содержание вложено в памятники Гегарда. Дается социально-экономическая обстановка того времени и степень развития армянской архитектуры и строительной техники.

Книга представляет интерес для большого круга читателей.

**57. ТОКАРСКИЙ Н. М. Джрвеж. (Результаты раскопок 1957 г.). Ереван, 1959. 65 стр., 27 л. илл.**

Изложены результаты раскопок археологических памятников на территории селения Джрвеж, расположенного в 11 км. от Еревана. При раскопках обнаружены остатки церковного сооружения 7-го века и часовен, сооруженных в течение средних веков. Обнаруженные памятники подвергнуты историко-архитектурному анализу. Дана реконструкция памятников.

Книга предназначена для читателей, интересующихся историей архитектуры, средневековым искусством и археологией.

**58. ЯКОБСОН А. Л. Очерк истории зодчества Армении 5—17 веков. Под общ. ред. Н. М. Бочинского. Москва—Ленинград, 1950. 168 стр. с илл.**

Истории армянского зодчества посвящена книга. Задача ее — в сжатом виде представить цельную картину развития этого зодчества, процесса рождения армянского архитектурного стиля. Автор стремится передать читателю то ощущение художественной выразительно-



© National Library of Armenia

сти армянской архитектуры, которое вызывает общение с самими памятниками. Для общей ориентировки читателя каждая глава имеет краткое введение, содержащее характеристику данного периода. Подробно изучено влияние армянской архитектуры на культуры окружающих стран.

Книга снабжена богатыми иллюстрациями и представляет большой интерес для читателей, интересующихся историей архитектуры.

**59. ЯРАЛОВ Ю. С. Аштарак. Москва, 1947. 30 стр. 12 л. илл.**

Из всех населенных мест Аштаракского района, Аштарак имеет наибольшее количество памятников архитектуры, занимающих особое место в истории архитектуры Армении. Аштарак— древнее село. К пятому веку относится базилика Циранавор на скалистом берегу Касаха. В книге рассказывается о церквах Циранавор, Кармравор, Маринэ, о жилых домах, мостах, чахкарах, расположенных в данном районе.

Книга доступна большому кругу читателей.

**60. ЯРАЛОВ Ю. С. Ереван. Москва, 1960. 72 стр.**

В книге рассказывается о столице Арм. ССР Ереване, о его архитектурных сооружениях, о его прошлом, величественном настоящем и блестящем будущем. Показан путь его возрождения; как из пыльного захолустного города, Ереван превратился в современную столицу социалистической республики, пройдя все этапы трудного пути истории армянского народа.

Книга являет собой как бы своеобразный альбом иллюстраций, сопровожденный текстом, вроде путеводителя и доступна широкому кругу читателей и туристов.

**61. ЯРАЛОВ Ю. С. Таманян. Москва, 1950. 163 стр. (Мастера советской архитектуры. Акад. архит. СССР, Институт истории и теории архит.).**



Александр Таманян— один из крупнейших советских зодчих, сыгравших значительную роль в создании национальной по форме, социалистической по содержанию армянской советской архитектуры. Такие произведения Таманяна как Дом правительства Арм. ССР и Государственный театр оперы и балета, построенные в Ереване, входят в золотой фонд культуры Советского Союза. В книге показано многообразие деятельности выдающегося мастера. Богато иллюстрированный материал делает наглядным повествование. Это общедоступная книга для читателей всех категорий и специальностей.

## *ՀՈԴՎԱԾՆԵՐ*

**62. ԱՂԹԱՄԱՐԻ ճարտարապետական կոթողը։ [Սուրբ Խաչ եկեղեցու մասին]։—«Սովետ. Հայաստան» [ամսագիր], 1968, № 6, էջ 16։**

**63. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ ԷԴ. Ճարտարապետության քայլերը։ [Հոկտեմբերը և հայ արվեստը]։—«Սովետ. արվեստ», 1967, № 11, էջ 32—38։**

**64. ԳՐԻԳՈՐՅԱՆ Մ. Երևանի ճարտարապետական անսամբլները։—«Սովետ. Հայաստան», [ամսագիր], 1953, № 4, էջ 19—29։**

**65. ԲԱԲԱՅԱՆ Լ. Կառավարական տունը և Լենինի հրապարակի անսամբլը։—«Սովետ. արվեստ», 1958, № 12, էջ 34—48։**

**66. ԲԱԲԱՅԱՆ Լ. Ճարտարապետության մի քանի հարցերի մասին։—«Սովետ. գրակ. և արվեստ», 1954, № 2, էջ 141—148, № 3, էջ 128—133, № 4, էջ 139—148։**

**67. ԲԱԲԱՅԱՆ Լ. Սովետական Հայաստանի ճարտարապետությունը։—«Սովետ. գրակ. և արվեստ», 1950, № 11, էջ 183—191։**



© National Library of Armenia

68. ԲԱԲԱՅԱՆ Լ. Սովետահայ ականավոր ճարտարապետը: [Սամվել Սաֆարյանի մասին]:—«Սովետ. գրակ. և արվեստ», 1952, № 2, էջ 136—142:

69. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ Ս. Միջնադարյան հայ ճարտարապետներ: [Մանվել ու Տրդատ ճարտարապետների մասին]:—«Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 1, էջ 99—118:—Ամփոփում ռուս. լեզ.:

70. ԳՐԻԳՈՐՅԱՆ Մ. Սովետահայ ականավոր ճարտարապետը: [Ալ. Թամանյանի մասին]:—«Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 1, էջ 154—162:

71. ԹԱՄԱՆՅԱՆ Մ. Ալեքսանդր Թամանյանը՝ քաղաքաշինարար:—«Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ (հաս. գիտ.), 1958, № 4, էջ 15—28:

72. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վ. Բեղմնավոր ուղի: [Կարո Հալաբյանի մասին]:—«Սովետ. արվեստ», 1959, № 2, էջ 70—71:

73. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վ. Գիտնականի սխրանքը: [Թորոս Թորամանյանի 100-ամյակի առթիվ]:—«Սովետ. արվեստ», 1964, № 5, էջ 43—51:

74. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վ. Քաղաքաշինության արվեստը: [Հայ ճարտարապետության անցյալից]:— «Սովետ. արվեստ», 1964, № 11, էջ 36—43:

74ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վ. Սևանա կղզու հուշարձանները:—«Գիտություն և տեխնիկա», 1967, № 9, էջ 28—34:

75. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ Կ. Թորոս Թորամանյան: [Ծննդյան 100-ամյակի առթիվ]:—«Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 1, էջ 15—24:

75ա. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ Կ. Պատմահնագիտական դիտողություններ Ավանի տաճարի վերաբերյալ:—«Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 3, էջ 76—90:

75բ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՍՏ. Ավան, Գառնի, Գեղարդ: «Գիտություն և տեխնիկա», 1967, № 11, էջ 16—25, 1968, № 2, էջ 28—40:



76. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՍՏ. Անի և Մառ:—«Սովետ. գրականություն», 1969, № 4, էջ 130—136:

77. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՍՏ. Հռիփսիմե: (էջմիածնի ճարտարապետական հուշարձանները):—«Սովետ. Հայաստան», [ամսագիր], 1959, № 3, էջ 34—36:

77ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՍՏ. Սանահին, 100 տարի...—«Գիտություն և տեխնիկա», 1967, № 7, էջ 13—22:

78. ՆՈՎԵԼԼՈ ԱԴԵՐԻԱՆՈ ԱԼՊԱԳՈ: Հաղբատի ճարտարապետությունը: (Քննական ակնարկ): Թարգմ. իտալ. Արմեն Զարյան:—«Սովետ. գրականություն», 1969, № 4, էջ 127—129:

79. ՊԻԿԱ ԱՆՅՈԼԴՈՄԵՆԻԿՈՍ: Միջնադարյան հայ ճարտարապետությունը: Թարգմ. իտալ. Արմեն Զարյան:—«Սովետ. գրականություն», 1969, № 4, էջ 125—127:

79ա. ՍԱՀԻՆՅԱՆ Ա. Զովունիի ճարտարապետական խումբը:—«Լրաբեր (Հայկ. ՍՍՀ ԳԱ), Հաս. գիտ.», 1968, № 1, էջ 101—120:

80. ՍԱՀԻՆՅԱՆ Ալ. Հայաստանի բազիլիկային կառուցվածքների կազմավորումն ու նրանց հետագա զարգացման ընթացքը:—«Տեղեկագիր» ՀՍՍՌ ԳԱ (հաս. գիտ.), 1953, № 3, էջ 63—87:

81. ՍԱՀԻՆՅԱՆ Ս. Ճարտարապետ-քաղաքաշինարարը: [Միք. Մազմանյանի մասին]:—«Սովետ. գրականութ.», 1960, № 6, էջ 83—91:

82. ՍԱՀԻՆՅԱՆ Ա. Սովետահայ ականավոր ճարտարապետը: [Հովհաննես Մարգարյանի մասին]:—«Տեղեկագիր» ՀՍՍՌ ԳԱ (հաս. գիտ.), 1965, № 7, էջ 47—60:

82ա. ՍԱՐԳՍՅԱՆ Մ. Մրենի տաճարի հիմնադիրների պատկերաքանդակները: [Կառուցված 7-րդ դարում]:—«Պատմա-բանասիրական հանդես», (ՀՍՍՀ ԳԱ), 1966, № 4, էջ 241—250:

83. ՍՏԵՓԱՆՅԱՆ Գ. Մեր ճարտարապետական կոթողները. Գեղարդ. [12—13-րդ դ. կառուցվածք]:—«Սովետ. Հայաստան» (ամսագիր), 1946, № 3, էջ 35—39:



© National Library of Armenia

84. ՍՏԵՓԱՆՅԱՆ Գ. Մեր ճարտարապետական կոթողները. Գառնի: [Գառնիի պատմական հուշարձանների մասին]:— «Սովետ. Հայաստան» [ամսագիր], 1945, № 3, էջ 35—39:

85. ՎԱՐԴԱՆՅԱՆ Ս. Հազարաշենը և նրա նշանակությունը հայկական ճարտարապետության մեջ:—«Լրաբեր (ՀՍՍՌ ԳԱ) հաս. գիտ.», 1967, № 6, էջ 78—88:—Ամփոփում ռուս. լեզ.:

86. ՔՅՈՇԿԵՐՅԱՆ Ա. Աղթամարը՝ վեհ, գեղեցիկ... [Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու մասին]:— «Սովետ. արվեստ», 1965, № 4, էջ 54—56:

87. ՔՈՉԱՐ ԳԵՎՈՐԳ: Արդի ճարտարապետական կոմպոզիցիայի գեղագիտական հարցերից:—«Սովետ. արվեստ», 1966, № 3, էջ 18—22:

## СТАТЬИ

88. АГАБАБЯН Г. Национальная архитектура и поиски современного стиля. [Об особенностях армянской архитектуры].— «Дружба народов», 1965, № 2, 225—228.

89. ВОРОНОВ Н. Добрый город. [О соврем. архит. облике Еревана].— «Декоративное искусство СССР», 1967, № 4, стр. 2—10.

90. ГРИГОРЯН А. Наш Ереван. [Архитектурный облик города]. К 40-летию Сов. Арм.— «Декоративное искусство СССР», 1961. № 3, стр. 1—6.

91. ГРИГОРЯН М. Выдающийся армянский зодчий. [К 85-летию со дня рождения акад. А. И. Таманяна].— «Лит. Армения», 1963, № 3, стр. 87—93.

92. ЕРЕМЯН А. К вопросу о датировке кафедральной церкви в Аване.— «Вестник общественных наук» (АН Арм. ССР), 1969, № 3, стр. 47—60.

93. ЗОРЯН СТ. Тораманян. [К 100-летию со дня рождения исследователя армянской архитектуры. Из воспоминаний].—«Лит. Армения». 1964, № 5, стр. 90—93.



94. ИСРАЕЛЯН Р. Архитектура завтрашнего дня. [О развитии армянской архитектуры].— «Дружба народов», 1956, № 5, стр. 141—144.

95. МАРУТЯН М. Архитектор и ученый. [К 100-летию со дня рождения Т. Тораманяна].— «Лит. Армения», 1964, № 5, стр. 87—89.

96. МНАЦАКАНЯН С. Выдающийся исследователь армянского зодчества. [К 75-летию Н. М. Токарского]. — «Лит. Армения», 1968, № 5. стр. 74.

97. МОЖЕЙКО И. и САШИНСКАЯ К. Страна варпетов. [О памятниках средневекового армянского зодчества].— «Вокруг света», 1967, № 2, стр. 26—30.

98. МУРАДЯН П. Армянская надпись храма Джвари.— «Лрабер», («Вестник общественных наук») АН Арм. ССР, 1958, № 2, стр. 55.

99. НАНУ ИОН. Из истории румыно-армянских художественных связей. [На примере архитектурных памятников].— «Историко-филологический журнал», 1964, № 3. стр. 107—122.

100. САИНЯН А. Архитектурный комплекс Зовуни.— «Лрабер», («Вестник общественных наук») АН Арм. ССР, 1968, № 1, стр. 119—120.

101. ХАЛПАХЧЬЯН О. Армянские мастера во Владимиро-Суздальской Руси. [Из истории русс. архит.].— «Лит. Армения», 1963, № 3, стр. 94—100.

102. ХАЛПАХЧЬЯН О. Архитектура Киликийской Армении.— «Вестник истории мировой культуры», 1961, № 1, стр. 127—136.

103. ХАЛПАХЧЬЯН О. Родники Армении. [Об архитектурном оформлении родников-памятников].— «Архитектурное наследство», 1957, № 8, стр. 93—114.

104. ХАЛПАХЧЬЯН О. Новые данные о культурных связях Армении и Франции. (Изображение памятника арм. зодчества в барельефах церкви Сент-Шапель в





© National Library of Armenia

Париже).— «Декоративное искусство СССР», 1963, № 2, стр. 44.

105. ЯКОБСОН А. Армянский монастырь 14-го века близ Белогорска в Крыму. (Памятник средневекого зодчества).— «Историко-филологический журнал», 1964, № 4, стр. 230—235.

106. ЯКОБСОН А. (Рецензия на книгу Н. Г. Чубинашвили «Разыскания по армянской архитектуре». 1967, 212 стр.).— «Советская археология», 1968, № 3, стр. 262—270.

## ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

*Աբրահամյան Վ. 11դ*
*Աղաբաբյան Գ. 32*
*Առաքելյան Բ. 5*
*Ավագյան Գ. 13, 31ա*
*Արեշատյան Էդ. 63*
*Բաբայան Լ. 65, 66, 67, 68*
*Բարխուդարյան Ս. 6, 11բ, 69*
*Բունիաթյան Ն. (26)*
*Գալձակ ճարտարապետ (6)*
*Գրիգորիկ վարդպետ (6)*
*Գրիգորյան Մ. 64, 70*
*Դարյան Վ. 1*
*Դերենիկ եպիսկոպոս 27*
*Եղիազարյան Հ. 8, 11ե, 12*
*Եսայան Խ. 28*
*Զարյան Ար. 78, 79*
*Զորյան Լ. 4*
*Էլլարյան Ի. 9*
*Թամանյան Ալ. (4), (14), (70), (71)*
*Թամանյան Կ. 4*
*Թամանյան Մ. 71*
*Թամանյան-Տաուսեն 4*
*Թամյան Հ. 11ա*
*Թոդոսակ ճարտարապետ (6)*



© National Library of Armenia

Թորամանյան Թ. (26), (73), (75)
Ժամհայր Շինող (6)
Իսահակյան Ավ. 4
Իսրայել Գոռաղձեցի (ճարտարապետ) (6)
Լեո 10
Խալփախչյան Հ. 7
Հալաբյան Կ. (72)
Հատիտյան Ա. 29
Հարությունյան Վ. 14, 15, 16, 17, 18, 19, 72, 73, 74, 74ա
Հովհաննես ճարտարապետ (6)
Հովհաննիսյան Կ. 5, 20, 31
Ղաֆադարյան Կ. 75, 75ա
Մաղմանյան Մ. 5, (81)
Մանվել ճարտարապետ (6), (69)
Մառ Ն. 23, (26), (76)
Մարգարյան Հ. 82
Մինաս վարդպետ (6)
Մխիթար Հյուսն (6)
Մնացականյան Ստ. 5, 21, 22, 23, 75բ, 76, 77, 77ա
Մոմիկ վարդպետ (6)
Յոհան ճարտարապետ (6)
Յուրև Յու. 4
Նովելլո Ադերիանո Ալպագո 78
Շչուսև Ա. 4
Չարենց Ե. 4
Պիկա Անյոլդոմենիկոս 79
Պիոտրովսկի Բ. 20
Ջուհարյան Թ. 24
Սահինյան Ալ. 5, 79ա, 80, 81, 87
Սարգսյան Մ. 82ա
Սարյան Մ. 4
Սաֆարյան Ս. (68)
Ստեփանյան Գ. 83, 84
Վեցիկ վարդպետ (6)



Վարդանյան Ս. 25, 85
Վրույր Արտաշես 26
Տարագրոս (26)
Տոկարսկի Ն. (26)
Տրդատ ճարտարապետ (6), (69)
Քալանթար Աշ. (26)
Քալանթարյան Ա. 31ա
Քյոշկերյան Ա. 86
Քուչար Գևորգ 87
Օրբելի Հովսեփ (26)

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՑԱՆԿ

Ազիզբեկովի շրջան 8
Ալավերդու շրջան 12
Աղթամար 5, 23, 62, 86
Աղստևի հովիտ 9
Ամրոցներ, բերդեր 8, 9, 10, 11գ 11դ, 12, 23, 24, 26
Անի 5, 10, 15, 23, 26, 76
Աշտարակի շրջան 5, 11դ; 3
Առաքելոց վանք 11ե
Արուճ (տաճար) 5
Ավան (տաճար) 5, 75ա, 75բ
Բագարան 5
Գառնի 5, 11բ, 23, 27, 75, 84
Գայանե (եկեղեցի) 5
Գեղարդ 5, 11բ, 75բ, 83
Գոշավանք (Իջևան) 11ա
Դիլիջանի շրջան 9, 11ա
Դվին 5, 16, 23
Երևան 5, 64, 65
Երերույք 5, 23
Զովունի 79ա



© National Library of Armenia

Զվարթնոց 5, 11գ, 17, 23, 31
Էջմիածնի շրջան 5, 11գ, 18, 23, 29
Էրեբունի 20
Թալին (եկեղեցի) 5, 23
Թանահատ (վանք) 5
Իջևանի շրջան 9, 11ե
Խաչքարեր 6, 11դ, 12, 23, 24, 41
Կամուրջներ 8, 9, 11դ, 11ե, 12, 13, 19, 23, 24, 26
Կիրանց վանք 11ե
Հաղարծին 11ա
Հաղբատ (վանք) 12, 78
Հռիփսիմե (տաճար) 5, 11գ, 77
Մակարավանք 11ե
Մահարձաններ 9, 11գ, 12, 13, 24
Մրեն (տաճար) 5, 82ա
Սանահին (վանք) 5, 12, 77ա
Սյունիք 22
Սևան (եկեղեցի) 5, 23, 74ա
Վաղարշապատ տե՛ս Էջմիածին
Վիշապներ 11ա, 11բ, 24
Տաթև (վանք) 5
Տեկոր (եկեղեցի) 5, 23
Քարավանատներ 5, 9, 11ե, 12, 13, 23, 24, 26
Օձուն (եկեղեցի) 5

## ИМЕННОЙ УКАЗАТЕЛЬ

Агабабян Г. 88
Азизбекян Р. 34
Алабян К. 50
Аракелян Б. 41
Аркин Д. 56
Арутюнян В. М. 41, 42, 43, 44, 45, 46, 47
Асратян М. 44
Бахчинян З. 34
Бочинский И. 58
Бунатян Н. 48
Васнин В. 56
Воронов Н. 89
Григорян А. 90
Григорян М. 91
Еремян А. 49, 92
Зорян Ст. 93
Исраелян Р. 94
Карлик Л. 50
Кириллова Ю. 51
Марутян М. 95
Меликян А. 44
Мнацаканян С. 41, 96
Можейко И. 97
Мурадян П. 98



© National Library of Armenia

Нану Ион 99
Оганесян К. Л. 52
Оганян К. Л. 42
Саинян Ал. 53, 100
Сарьян М. 51
Сашинская К. 97
Сафарян С. 46
Таманян Ал. (61), (91)
Тер-Нерсесян С. 36
Токарский Н. 54, 55, 56, 57, (96)
Тораманян Т. (93), (95)
Трдат (зодчий) 43, 46, 52, 54, 55, 58
Утуджян Эд. 38
Халпахчьян О. 102, 103, 104
Чубинашвили Г. (41), (106)
Якобсон А. 58, 105, 106
Яралов Ю. 48, 59, 60, 61

ПРЕДМЕТНЫЙ УКАЗАТЕЛЬ

Аван 46, 54, 58. 92
Азизбековский район 51
Айриванк (Севан) 51, 55
Амберд 46, 51, 54, 55, 58
Ани 43, 46, 52, 54, 55. 58
Апаранский район 55
Аруч (церковь) 51, 54, 55, 58
Ахпат 39, 46, 51, 54, 55. 58
Ахтамар 36, 46, 54, 55, 58
Аштаракский район 46, 51, 54, 55, 58. 59,
Белогорск 105
Владимиро-Суздальская Русь 101
Вагаршапат, см. Эчмиадзин



Гарни 46, 51, 53, 54. 55, 58
Гегард (Айриванк) 46. 51, 53, 54, 55, 56, 58
Горисский район 51
Двин 46, 51, 54, 55, 58
Джрвеж 54, 55, 57
Дилижанский район 51, 54, 55, 58
Ереван 44, 46, 54, 55, 89, 90
Ереруйк 46, 54, 55, 58
Звартноц 45. 46, 51, 54, 55, 58
Зовуни 100
Каравансараи 45, 51, 54, 55, 58
Кармравор (церковь) 51, 59
Маринэ (церковь) 51, 59
Мармашен (собор) 46, 51, 54, 55, 58
Мосты 46, 51, 54, 55, 58
Мрен (церковь) 46, 54, 55, 58
Надгробные памятники 46, 54, 55, 58
Нор-Гетик (Гошаванк) 46, 54, 55, 58
Одзун 46, 54, 55, 58
Рипсимэ (храм) 46, 49, 51, 54, 55, 58
Родники- водоводы 43, 54, 55, 102
Санаин 46. 51, 54, 55, 58
Сент-Шапель, церковь в Париже 104
Сисианский район 51, 54, 58
Сюник 51
Талин 46, 51, 54, 55. 58
Татев 48, 51, 54, 55, 58
Текор 46, 54, 55
Хачкары 41, 46, 51, 54, 55, 58
Циранавор (церковь) 59
Эчмиадзин 46, 47, 48. 51, 54, 55. 58

Гос Библиотека
ZUUՌ-Арм. ССР
им. ... Мясникяна

© National Library of Armenia

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կազմողի կողմից . . . . . . . . . 3
Որոշումներ . . . . . . . . . . 6
Ուսումնասիրություններ, ուղեցույցներ . . . . . 6
Ալբոմներ . . . . . . . . . . . 19
Գրքեր, ուսումնասիրություններ ռուսերեն լեզվով . . . 20
Հոդվածներ . . . . . . . . . . 29
Հոդվածներ ռուսերեն լեզվով . . . . . . . 32
Անվանացանկ . . . . . . . . . . 35
Առարկայական ցանկ . . . . . . . . . 37

## СОДЕРЖАНИЕ

От составителя . . . . . . . . . . . 4
Постановления . . . . . . . . . . . 6
Исследования, путеводители . . . . . . . 6
Альбомы . . . . . . . . . . . . 20
Книги и исследования на русском языке . . . . 20
Статьи . . . . . . . . . . . . 29
Статьи на русском языке . . . . . . . 32
Именной указатель . . . . . . . . . 39
Предметный указатель . . . . . . . . 40

Տեխ. խմբագիր՝ Հ. Մարտիրոսյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ս. Գևորգյան

ՎՖ 03026 Պատվեր 421 Տիրաժ 1000

Հանձնված է արտադրության 25/IX 1969 թ.։
Ստորագրված է տպագրության 5/II 1970 թ.։
Թուղթ՝ 60×92 1/16։ Տպագրական 3 մամ., հրատ. 2 մամ.։
Գինը 15 կոպ.։

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի մամուլի պետական կոմիտեի պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր վարչության № 6 տպարան, Երևան, Թումանյան փ. № 23/1։

© National Library of Armenia

ՀՀ Ազգային գրադարան
NL0121006

© National Library of Armenia

ԳԻՆԸ 15 ԿՈՊ.

016
2-25

© National Library of Armenia